ՆՈՐ-ԴԱՐ

№ 181 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ, 10 Հոկտեմբերի, 1903 ՈՒրբաթ, 10 Հոկտեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 181

Տարին 10 ռուբ. վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ. Բաժանորդ կն դրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնների ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների համար 2 կ., բեկլամների համարը կրկնապատկւում է

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Հայերէնից ռուսերէն թարգմանութիւնների պահանջը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մամուլի շուրջը։
Դատական։
Քաղաքական.—Ռուսական առաջարկները Չինաստանին։ Ճապոնիացիները Քորէայում։ Դիւրմանցիները Ծայր.—Արեւելքի հարցում։ Մակեդոնացի վախճտականները Բուլղարիայում։ Ունգարիայի պարլամենտական տագնապը։ Քաղաքական լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Բանասիրական.—Ճառեսեսի յիշատակարանից։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 9-ն հոկտեմբերի, 1903 թ.

ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

—

Քիչ անգամներ չէ պատահել ռուս մամուլի էջերում կարդալ թիւր, միակողմանի ու սաստիկ սահմանափակ կարծիքներ հայ արդի գրականութեան մասին։ Այդ միևնոյն մամուլի ներկայացուցիչների մէջ պատահում են և այնպիսիները, որոնք, բոլորովին ուրանալով նրա գոյութիւնը, ամենաանվայել լեզու են բանեցնում հայ մտքի արտադրութեան դէմ։

Մի կողմ թողնելով ռուս այդ կարգի հրապարակախօսներից ոմանց այդ աններելի ուրացութիւնն ու արհամարանքը, որոնք հետևանք են ոչ-բարեացակամ դիտաւորութիւնների, չի կարելի, սակայն, ուշադրութեան չառնել մի բաւական ծանրակշիռ հանգամանք, այն է ռուս մարդու բացարձակ անծանօթութիւնը հայ գրականութեան հետ։ Ռուս ժողովուրդը հային տեսնում է վաճառականութեան ու պետական պաշտօնէութեան մէջ, կամ իբրև բժիշկ, վաստակաւոր, արհեստաւոր և այլն և այդ շրջաններում իր ստացած տպաւորութիւնների տակ էլ նա կազմում է իր համոզումները ամբողջ հայ ժողովրդի մասին։ Որքան էլ այդ համոզումները ըղխելիս լինեն իրական կեանքից, որքան էլ նրանք հիմնուած լինեն հայի գործնական կեանքի վրայ, այնուամենայնիւ չեն կարող լիակատար, ամբողջ և սխալանքներից ու մոլորութիւններից ազատ լինել, եթէ ռուս մարդը ծանօթ չէ իր հետ կողք-կողքի աշխատող ժողովրդի գրականութեան։ Ռուս ժողովրդի մտքում տպաւորուած հայութեան պատկերը միշտ պակասաւոր ու միակողմանի պէտք է լինի, եթէ նա անտեղեակ է այդ հասարակութեան մտքի արտադրութիւններին, ուր ցոլանում են նրա ղեկոյթները, ձգտումները, իդէալները ու սովորութիւնները, որոնց մէջ անդրադարձած են հայ ազգի անցեալն ու ներկան իւր լաւ ու վատ, զովելի ու պախարակելի կողմերով։

Այդ կողմից ահագին նշանակութիւն ունի հայ գրականութեան տարածումն ու ժողովրդականացումը ռուս հասարակութեան մէջ, որը պէտք է կատարուի թարգմանութեան շնորհիւ։ Այդ ուղղութեամբ հարկաւոր եղած գործունէութեան սկզբնաւորութիւնն արդէն եղած է ինչպէս մասնաւոր հրատարակութիւններով, նմանապէս և ռուս պարբերական մամուլի էջերում լոյս տեսած մանր հատուածների թարգմանութիւններով։ Սակայն, կատարուածները շատ չնչին են համեմատութեամբ մեր արդի գրականութեան մէջ եղած հայ հեղինակների բնտիր գրուածների, որպիսիք են Րաֆֆիի, Պռօշեանի, Նար-Դոսի և ուրիշների վիպասանական գրուածները։ Հայ բելլետրիստների աշխատութիւնները, որոնք այնքան մեծ հետաքրքրութեամբ են կարդացուում հայ հասարակութեան մէջ, նոյնպէս հետաքրքրական չեն լինել նաև ռուս ժողովրդի համար, եթէ միայն թարգմանութիւնները կատարուեն երկու լեզուներին ևս լաւ տեղեակ անձերի ձեռքով։

Այդ պարտքը ծանրանում է պետական ուսումնարանները աւարտող և կարող հայ երիտասարդութեան վրայ։ Դրանք սիրով պէտք է կատարեն այդ գործը, որովհետև դա օգտակար հետևանքներ միայն կարող է ունենալ թէ մէկ և թէ միւս հասարակութեան համար։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասութիւններից մէկը ինդիր էր յարուցել քաղաքի զանազան մասերում ծերնդրարերական քաղաքային ապաստարանները հիմնելու։ Այս ինդիրը յանձնուած էր քաղաքային բժշկական-առողջապահական խորհրդի քննութեան, որը հոկտեմբերի 8-ին ներկայացրեց քաղաքային վարչութեանն իւր զեկուցումը։ Բժշկական-առողջապահական խորհուրդն իւր այդ զեկուցման մէջ անհրաժեշտ է համարում ինչպէս ծերնդարերական ապաստարանների բացումը, այնպէս և թաղային մանկաբարձական-գինեկոլոգիական օգնութեան կազմակերպութիւնը։ Ընդամին խորհուրդը հնարաւոր համարում առ այժմ բանալ մի ապաստարան Հալաբարում, Մեսրոպի զառիվայրի և Կախէթեան հրապարակի սահմաններում։ Ապաստարանը պէտք է լինի բացառապէս չքաւորների համար և պէտք է լինի 20 մահճակ։ Ինչ վերաբերում է մանկաբարձական-գինեկոլոգիական օգնութեան թաղային կազմակերպութեանը, խորհուրդն անհրաժեշտ է համարում այդ բանի համար հիմնել երկու կին-բժիշկների և մանկաբարձուհիների պաշտօններ և դրան համապատասխան բաժանել երկու մաս։

— Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ առանց տոմսակի ուղեւորների թիւը հետզհետէ աւելանում է, որից և դժբաղդ դէպքեր են պատահում ուղեորներին, անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչը մի հրամայ է հրատարակել, որով առաջարկում է տոմսակ չունեցող ուղեորներին իջեցնել ճանապարհին առաջին իսկ կայարանում, իսկ այդպիսի ուղեւորների տանող կոնդուկտորներին արձակել պաշտօնից և յանձնել բրէական դատի։ Այն անձերին, որոնք ցոյց կըտան, թէ այս-ինչ անձն ուղեորում է առանց տոմսակի, այսինքն թաքուն,— դրամական պարգև կարուի։

— Թիֆլիսի նահագալետի դիւանատունը խնդրում է ոստիկանապետին և գաւառապետին միջոցներ ձեռք առնել քնակչութեան, մանաւանդ արդիւնաբերողների, գործարանատէրերի և տնայնագործների մէջ կարելոյն չափ ընդարձակօրէն տեղեկութիւններ տարածելու Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների Ս.-Լուի քաղաքում (Միսսուրի նահանգ) առաջիկայ տարուայ ապրիլին բացուելիք համաշխարհային ցուցահանդէսի մասին, որին Ռուսիան մասնակցում է պաշտօնապէս։ Ցուցահանդէսի վարչութիւնը էքսպլոատները զետեղելու տեղերը, նմանապէս և ռուսական բաժնի լուսաւորութիւնը տալիս է ձրիարար, իսկ էքսպոնատների տեղափոխութիւնը, և վիրաւորների ու առանձին պաւիլիոնների չինութիւնը պէտք է լինի նրանց տէրերի հաշուին։ Ցնայնագործական իրերի ցուցադրողներին կարուեն կարելոյն չափ ընդարձակ արտօնութիւններ և մեծաքակ ապագայում կխնդրուի, որ էժան սակագին նշանակուի ցուցահանդէսն ուղարկուող էքսպոնատների փոխադրութեան համար։ Ցուցահանդէսի կազմակերպիչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՒՇԱՑԱՆՑԻ ՔԱՐԱՆԻՑ

Վ Է Դ *)

—

7/19 յունիս։

Տիգրանուհին իւր արած անուղղակի խոստովանութիւնից յետոյ, միշտ խուսափում է իմ ներկայութիւնից և, ինչպէս երևում է, իմ ներկայութեան ժամանակ շատ է տանջւում։ Այդ ես նկատեցի ճաշի ժամանակ, երբ տեսայ նրա անտեղի կարմրիլը և դէմքի անհանգիստ արտայայտութիւնը։

Անպատճառ նա սիրում է ուրիշին, ապահով եմ դրան։ Ինչ ասել կուզի աղջկութեան ժամանակ Պերայի հասարակական այգիներում, Լանգայի պարտէզներում մեր սարքած դուարճութիւնները, երկնքի տակ, ծովի վրայ մեր հին փոխադարձ սիրոյ ժպիտները յիշելիս զգում եմ, որ նա ինձ է սիրում, բայց...։ Գուցէ նա ինչպէս որ խարեց սիրականին, այնպէս էլ դաւաճանում է ամուսնուն և այս անգամ մի երկրորդ անձ աւելանում է իր նախորդների վրայ, և այդ անձը կոչւում է տարփածու։ Ո՛վ գիտէ, կարելի է յուսալ։ Նա ամուսնացաւ Աշոտ Խահակեանի հետ, որովհետև Խահակեանը նոյնպէս ազամարդ էր, ինչպէս ես, նրա ֆիզիքական կազմութիւնը աւելի գեղագիտական էր, քան իմը, նա աւելի աշխարհային մարդ էր, քան ես։

Ես շատ անգամ մտածել եմ Տիգրանուհու բարոյականութեան վրայ, մանաւանդ առումով կամ ինչպէս այդ բառը հասկանում էժողովուրդը, և մինչև այսօր ոչ մի արատ չեմ տեսել, բայց զգացել եմ շատ բան։ Դրա պատճառը թերևս սկեպտիկականութիւնս է, որ ինձ տպաւորում, կասկածոտ և.. գուցէ «կոյր» դարձրել, որովհետև տեսածիս հակառակ եմ զգում «գուցէ» ներով։ Եթէ ուրիշները չեն բամբասում նրան, պատճառն այն է, որ ոչինչ չեն տեսել և ինձ նման չեն զգում։ Ես զգում եմ, որ նա սիրահարներ շատ ունի, որովհետև թարմ, որ դեղեցիկ, առողջ է, և ամուսինը նրա վրայ այնքան կոյր վստահութիւն ունի, որ նրան ազատում է պատասխանատու լինելու պարտաւորութիւնից։ Գուցէ հէնց այդ անպատասխանատու ազատութիւնը և ինքնագիտակցական պատասխանատուութիւնն է, որ նրան չի ձգում մոլութեան մէջ և գուցէ չի էլ ձգելու, սակայն ես կասկածում եմ ակամայ, թէև նա կասկածի տեղիք չէ տուել բացի ինձ ժպտելուց։ Այդ կասկածը իմ մէջ ծնեցրել է հակասական զգացումները նրա վերաբերմամբ, ինչպէս և ամեն բանի մասին։

Ես շատ եմ մտածել սիրուս վրայ։ Արդեօք ես նրան սիրում եմ այնպէս, ինչպէս Գէորգը սիրում է Վիրգինէին։ Հաստատ պատասխան չեմ կարող տալ, միայն համառօտ կանցնեմ սիրոյ վէպիս վրայից, որ գուցէ ինձ մի որոշ եզրակացութեան հասցնէ։

Ինչպէս ասել եմ, իմ սիրոյ կեանքը հակասական է։ Սիրելով նրան, ես էլ ունեցայ Գէորգի երազները, ծրագիրներն ու իդէալները։ Ապրում էի նրան տեսնելու համար և միայն նրանով։ Երբ ամուսնացաւ նա, երկար տառապեցայ հոգեկան հիւանդութեամբ և այդ հիւանդութեան ժամանակ դեռ պաշտում էի նրան հիւանդ չկերովս, որոնց մէջ կարծես անմահական ջուր էր կաթիլաթում, երբ զգում էի, որ դիցուհիս դեռ սրտիս տաճարի մէջ է, իդէապէս իմն է, միմիայն իմը, և այնքան մաքուր է՝ որքան Սրբուհի-

Թերեան, այնքան պաշտելի՝ որքան Աստղիկը։ Նրա վրայ նայում էի իբրև մի թանկագին ու անգիտ գանձի վրայ, որին եթէ մօտենայի, իսկոյն պիտի հալուէր իմ շնչի ազդեցութեան տակ և պիտի գոլորշիանար առ միշտ ինձանից վերանալով։ Սէրը ինձ դարձրել էր աստուածանուէր զերվիշ, որ կրում է իւր սրտի մէջ աստուածային լոյս և գեղեցկութիւն և այդ լոյսն ու գեղեցկութիւնը չպղծելու համար, միշտ իրեն հեռի է պահում, իրեն մեղաւոր է համարում Աստուծոյ նուիրական տաճարին մօտենալու համար և վախչում է ամայութեան մէջ նրան պաշտելու։ Ես էլ թէև նոյնքան սուրբ ու մաքուր լոյս էի կրում սրտիս մէջ, նոյնքան վսեմ ու վեհ գեղեցկութիւն հոգուս մէջ, բայց իմ արտաքին կեանքը չարունակւում էր միևնոյն վատաշտութեամբ, որը չէր պղծում սակայն հոգիս ու սիրոյս, այլ, ինչպէս մննակեացի փնտուած ամայութիւնը, աւելի վհռութիւն ու բարձրութիւն էր տալիս իմ հոգեկան հայեցողութեան։ Ինչպէս որ քրիստոնէական եղբայրասիրութիւնը փայլում էր Փիլիպպոս Բ-ի օրերում, որը նոյն Քրիստոսի անունով հաւատաքննութեան սարսափները սանձեց,— այնպէս էլ այդ վեհութիւնն ու բարձրութիւնը փայլում էին լուսնի մաքրութեամբ իմ վատաշտ ու անբարոյական գործերիս մէջ։ Ա՜հ, որքան լաւ է վէպերի աղդեցութեան տակ սիրել սովորել։ Երբ նա հեռացաւ Պոլսից, ես չարունակեցի սովորական կեանքովս ապրել։ Ժամանակի ընթացքում այնքան զբաղուեցի արտաքին կեանքով և ինձ չրջապատող յոռի միջավայրով, որ նրա յիշատակը հետզհետէ ազօտ ու նսեմ էր երևում ինձ, և քիչ ժամանակ յետոյ բոլորովին մոռացայ նրան, որովհետև դէն չպըռեցի ինձանից սրբութիւնն ու ազնուութիւնը և հոգով տարով անձնատուր եղայ իմ բնական գալած անբարոյականութեանը։ Դրա պատճառը շատ պարզ է. Թրքական մի առած կարող է կարճ և միանգամայն ընդարձակ կերպով բացատրել այդ. «Զգործածուող երկաթը կը ժանգոտուի»։ Իմ անհոգութեան շնորհիւ չը-գործածելով ինչպէս բարի ձգտումներ ունէի ինձանում, ես ժանգոտեցի ներքուստ, և այդ ժանգն այժմ թունաւորում է արիւնս, որի մէջ փայլուն են մնացել այն հիւլէները միայն, որոնք նորոգում ու սնուցանում են դէպի վաւաշոտութիւն ձգտող չղերս, որովհետև նրանք էին միայն գործածուում։ Մի խօսքով ես դարձայ արդի երիտասարդութեան տիպարը։ Մոռացայ անցեալը, թէև անցեալի վերյիշումը ինձ ուրախացնում է ներկայ դժբաղդութեանս ժամանակ. մոռացայ և՛ Տիգրանուհուն բոլոր բարի ձգտումներիս և բարձր իդէալներիս հետ։ Նրան յիշում էի շատ քիչ անգամ, այն ժամանակ միայն, երբ մտածում էի անցեալի վրայ, և այդ յիշողութիւնը ոչինչ չէր ազդում չորացած չիղերիս։ Մէկուկէս տարուայ բացակայութիւնից յետոյ վերադարձայ Պոլիս, և հէնց առաջին անգամ նրան տեսած ժամանակ անտարբերութիւնս փոխուեց բուռն սիրոյ։ Սրանից քիչ ժամանակ առաջ, թէթեւնիկ սիրահարի նման թռչկոտում էի նրա շուրջը և ինձ շատ երջանիկ էի զգում։ Սկսեցի նրանով տանջուել, նրա ներկայութեան ինձ աւելած երջանկութիւնովը յափրանալ. նրա իւրաքանչիւր չարժումը, իւրաքանչիւր խօսքը ինձ համար գաղտնիք անելով սկսեցի ուսումնասիրել, խօսքով զգացումներս սկսեցին զրգռուել և չձանձրանալ։ Նա ինձ հետաքրքրում էր այնպէս, ինչպէս նախնիների կազմակերպութիւնը, Գամելիազարդ տիկինը և Գամելիա Թէատրիզէսի մազերի գոյնը։ Ի՞նչ անչնորհք

*) Տես «Նոր-Դար» № 180.

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

— «Ժամանակ»-ը կը հրատարակէ հետեւեալ հեռագիրը Մադրիտէն.

Ընդհանուր գործադուլ հռչակուած է Պարսելոնայի մէջ։ Գործադուլաւորները ամբողջ քաղաքին ջուրը, լոյսը եւ գազը կտրած են։ Ամէն կողմ կռիւներ կը տեղի ունենան։ Զինուորները կրակ կ՚արձակեն ամբոխին վրայ։ Կան շատ մը սպանեալներ եւ վիրաւորներ։

* * *

«Нов. Врем.»-ի յատկացուցած տեղեկագրին համաձայն, Ֆրանսիոյ մէջ ապրող Սպանիոյ հպատակներուն մէջ մեծ ոգեւորութիւն կը տիրէ Սպանիոյ մէջ տեղի ունեցող գործադուլին առթիւ։ Ֆրանսական կառավարութիւնը կ՚ուզէ ամէն միջոցներ ձեռնարկել, որպէսզի Սպանիոյ մէջ տեղի ունեցող անկարգութիւնները չազդեն Ֆրանսիոյ վրայ։

* * *

«Гражданинъ» ուշ իրեն Մեսսինոյ երկրաշարժին եւ անկէ ետքը ընկալուած հեռագրերուն վրայ ճեռնարկած մեծ հաւաքածոյին մասին։

Հետաքրքիր է, որ այդ հաւաքածոյին

Ա. Փոքրասց

(Կը շարունակուի)

— Ինչո՞ւ ուրեմն ես ուզում, որ ես ամուսնանամ այդ աղջկան հետ,— հարցրեց Ռոստովը։

— Ես ոչինչ չեմ ուզում, ես միայն կարծում եմ, որ դուք, որպէս ազնիւ մարդ, պարտաւոր էք ամուսնանալ, երբ...

— Ես ոչ մի պարտաւորութիւն չեմ զգում,— ընդհատեց Ռոստովը։

Դոլոխովը կատաղութիւնից գունատուեց եւ մի րոպէ լռելուց յետոյ ասաց.

— Ինչո՞ւ ես ուրեմն ինձ հրաւիրել, եթէ չես ուզում ասել ինձ, որ խաբեբայ ես, որ...

— Ես ոչ մի բան չեմ ուզում ասել։ Ես գիտեմ, որ դուք ազնիւ մարդ էք։ Ահա ինչ ես ուզում։

— Ներեցէք, ներեցէք, սիրելի՛ս, ես ամէն բան շփոթեցի եւ ամէն կողմից ինձ վրայ հարձակուած եմ համարում։ Ներեցէք ինձ եւ ասացէք, ինչպէս կարելի է ձեզ համար անել այն, ինչ որ ես պատրաստ եմ անել։ Ես ամէն բան կանեմ ձեզ համար, որովհետեւ...

Դոլոխովը չկարողացաւ շարունակել։ Նա նորից լռեց։

— Ես ոչ մի բան չեմ ուզում,— ասաց Ռոստովը,— միայն կարծում եմ, որ ձեզ համար եւ ինձ համար ամենալաւ բանը այն է, որ ես ձեզ հետ չտեսնուեմ։ Ես ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ ուզում...

— Ինչո՞ւ ես ուրեմն ինձ հրաւիրել, եթէ ոչինչ չես ուզում,— ասաց Դոլոխովը։

— Ես ոչ մի բան չեմ ուզում,— կրկնեց Ռոստովը։

— Ես ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ ուզում...

— Ինչո՞ւ ես ուրեմն ինձ հրաւիրել, եթէ չես ուզում ասել ինձ, որ խաբեբայ ես, որ...

— Ես ոչ մի բան չեմ ուզում ասել։ Ես գիտեմ, որ դուք ազնիւ մարդ էք։ Ահա ինչ ես ուզում։

— Ներեցէք, ներեցէք, սիրելի՛ս, ես ամէն բան շփոթեցի եւ ամէն կողմից ինձ վրայ հարձակուած եմ համարում։ Ներեցէք ինձ եւ ասացէք, ինչպէս կարելի է ձեզ համար անել այն, ինչ որ ես պատրաստ եմ անել։ Ես ամէն բան կանեմ ձեզ համար, որովհետեւ...

Դոլոխովը չկարողացաւ շարունակել։ Նա նորից լռեց։

— Ես ոչ մի բան չեմ ուզում,— ասաց Ռոստովը,— միայն կարծում եմ, որ ձեզ համար եւ ինձ համար ամենալաւ բանը այն է, որ ես ձեզ հետ չտեսնուեմ։

պատած էր վախչել Սոֆիա, որտեղ կոմիտեից հրաման ստացաւ վերադառնալ Կ. Պոլիս։ Այնտեղ հասնելուց յետոյ կոմիտեի ներկայացուցիչ Նազար բէկ և Պատրիկ-էֆէնդի յայտարարեցին նրան, թէ պէտք է սպանել մի մարդու, և այն ժամանակ իսկ վճակ ձգուեց կոմիտեի չորս անդամների միջև։ Վիճակն ընկաւ իրեն։ Պատրիկ-էֆէնդին ասաց նրան, թէ հետևեալ օրը նա պէտք է ճանապարհ ընկնի դէպի Մոսկուա և այնտեղ սպանի Խահակ ժամհարեանին, իբրև ճանապարհածախս Պատրիկ-էֆէնդին տուեց նրան թղթական 35 լիրա, իսկ սպանութեան համար մի դաշոյն յանձնեց։ Վեննայում փոխելով անցագիրը, թղթական փողերը փոխելով ռուսական փողերի և գնելով մի ռևոլվեր, եկաւ Վարշաւա։ Վագոնում նա ծանօթացաւ մի հայի հետ, որի անունը չգիտէ և որը բերից հասցրեց իրեն մինչև Դինհսովի կահաւորուած սենեակները

Թափառելով Մոսկուայում, Սարգսեանը դիպուածով մաս Կուպնեցկի կամուրջը և այնտեղ տեսաւ «Пассажъ Джамгаровыхъ» ցուցանակը։ Գաղտագծով, նրա խնդրանքով, նրան ցոյց տալին Խահակ Ժամհարեանին, որը անցորդարձ էր անում։ Նա մտքումը պահեց Ժամհարեանի դիմագծերը և երեք կիրակի գնում էր հոյոց եկեղեցին կատարելու համար իրեն արուած յանձնարարութիւնը։ Այդ բանն աջողուեց միայն դեկտեմբերի 15-ին։ Եթէ իրեն չբռնէին, նա կգնար Պետերբուրգ, իսկ այնտեղից կվախչէր արտասահման։ Մոսկուայում նա չի ունեցել ոչ թէ միայն գործակիցներ, և նոյն իսկ ծանօթներ։

(Կշարունակուի)

ԲԱԳԱԲԱԿԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆԻՆ

Տօքիա հրատարակուում ճապոնական «Kokumin» լրագիրը հրատարակել է ռուս կառավարութեան Չինաստանին առաջարկած պայմանագրի հետևեալ հինգ յօդուածները.

1) Չեան-ձիւնների և բոլոր զինուորական ու քաղաքային պաշտօնեաների նշանակումն ու արձակումը պէտք է կատարուին ռուս-դեսպանի և չին կառավարութեան համաձայնութեամբ։ Մանջուրիայի չինական բոլոր զօրքերը պէտք է գտնուեն ռուսերի հսկողութեան տակ. եթէ չինական զօրքերը անկարող լինեն խաղխաղներին դիմադրելու, ռուսերը պարտաւոր են օգնութեան հասնել նրանց։

2) Դաշնագրի մէջ չյիշուած արտօնութիւնների ապրանքների մուտքը արգելւում է մանջուրական առևտրական հրապարակները։ Արգելւում է նմանապէս և հանքերի օտար արտօնութիւնների ձեռքով շահագործումը։

3) Մանջուրիայի մաքսատները պէտք է գտնուեն դաշնագիրը ստորագրող պետութիւնների համերաշխ հսկողութեան տակ։ Երկաթուղային գիծը Չինաստանին պէտք է վերադարձուի 20 տարուց, սկսած դաշնագրի ստորագրուած օրից։ Միւս արտօնութիւններին արգիլւում է Մանջուրիայում երկաթուղային գծեր չինել կամ ձեռք բերել։

4) Փոստ-հեռագրատները պէտք է գտնուեն չինական ու ռուսական պաշտօնէութեան ձեռքը. պաշտօնավարութեան վերաբերուած որևիցէ թերութիւն կամ թիւրիմացութիւն պէտք է քննութեան առնուեն ռուսական պետական կողմից։

5) Սոյն դաշնագրի պատճառով արտօնութիւններից մէկի կամ մի քանիսի և ռուս կառավարութեան միջև պատերազմ բացուած դէպքում, Չինաստանը պարտաւոր է Ռուսիայի կողմը անցնելու. իսկ առաջնի մերժած և, պատերազմը բացուելով, յարձանակը առաջ կառավարութեան կողմը մնացած դէպքում, Ռուսիան իրաւունք ունի Մանջուրիան գրաւելու։ Այդ դէպքում չինական ամբողջ պաշտօնէութիւնը պարտաւոր է Մանջուրիայից հեռանալու, իսկ հասարակ ժողովրդին իրաւունք կտրուի մնալու իր հայրենիքում։

—

ՁԱՊՈՆԱՑԻՆԵՐԸ ՔՈՐԷԱՑՈՒՄ

Ճապոնական զօրքերի Մոզամպո գումաք դուրս գալու լուրը թէև հեռագիրը հերքեց, սակայն և այնպէս. նա շարունակում է մարդիկ վրդովեցնել Հեռաւոր-Արևելքում, ուր այն կարծիքն է տիրում, թէ ճապոնիայի կողմից մի այդպիսի քայլ կարող է Ռուսիային ստիպել խիստ միջոցների դիմելու։ Ինչպէս յայտնում է «Frank. Zeit»-ը, այդ լուրը Չանբհայ հաղորդուած է եղել 2ինֆուից (Պորտ-Արտուրի դիմացը)։ Ինչպէս երևում է, Մոզամպոն վաղուց արդէն գրաւած է եղել ճապոնացիների ուշադրութիւնը։ Քորէական այդ նաւահանգիստը ճապոնական Տէու-Սիմա կղզուց ընդամենը 150 մղոն հեռաւորութիւն ունի։ Պատմւում է, թէ 1899 թ. Սէուլի ռուսական ներկայացուցիչ Պալովը, Մոզամպո այցելելով, յայտնել է, թէ Ռուսիային ցանկալի էր այնտեղ մի կոր հող ձեռք բերել, և դրա վրայ չի անցնում երեք ամիս, որ լուր է տարածւում, թէ ճապոնացիները արդէն ստորագրել են այդ կոր հողի վրայ։ Այն ժամանակ, Պալովը հրաժարւում է իւր մտադրութիւնից և ընտրում է մի ուրիշ կոր։ Այդ դէպքը անգլիական լրագրներից ոմանց տեղիք է տուել լուրերը տարածելու, թէ 500 ռուս զինուորական թնդանօթներով ցամաք են դուրս եկել Մոզամպո։

—

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԾԱՑՐ. ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՐՑՈՒՄՔ

«Times»-ի Բեռլինի թղթակիցը հաղորդում է, որ Գերմանիան լուրջ նախապատրաստութիւններ է տեսնում Հեռ.-Արևելքում առաջ եկած բարդութիւնների առիթով և թէ հոկտեմբերի 10-ին (Ն. ս.), պետական կանցլեր կոմս ֆոն-Բիւլովի Բեռլին ժամանումը իբր կապ ունի Ռուսիայի ու Գերմանիայի միջև կայանալիք համաձայնութեան հետ Հեռաւոր-Արևելքի վերաբերութեամբ։ «Morn. Post»-ը յայտնում է, թէ Գերմանիային շատ ցանկալի է, Ռուսիայի ու ճապոնիայի միջև պատերազմ բացուիլը, յուսալով, թէ այդ առիթով ինքը կարող կլինի իւր աղդեցութեան չրջանը գգալի չափերով ընդարձակել Հեռաւոր-Արևելքում։

—

ՄԱՆԵՎՈՒՐԻԱՅԻՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՑՈՒՄ

«Бирж. Вѣд»-ին Սոֆիայից հեռագրում են հետևեալը. «Մակեդոնական փախստականները Ադրիանուպոլսի վիլայեթից բանակցութիւնների առարկայ են դարձել Թիւրքիայի ու Բուլղարիայի միջև։ Սոֆիայի կառավարութիւնը այդ առիթով Թիւրքիային այսպիսի պայմաններ է առաջարկել. փախստականների իրենց հայրենիքները պէտք է կատարուի հերոպական տէրութիւնների հսկողութեան տակ. բացի փախստականներին լինելիք ընդհանուր ներումից երաշխաւորութիւն պէտք է արուի նրանց անձի ու ինչքի ապահովութեան համար քրիստոնեայ կառավարիչ նշանակելու միջոցով. Թիւրքիան պատրաստ է փախստականներին իրենց տեղերը վերադարձնելու հարկաւորուած գումարները յանձնել հերոպական դրամատներին։

Սոֆիայի բուլղար լրագրները յայտնում են, որ պատերազմի տագնապը առժամապէս կորցրել է իւր սուր բնաւորութիւնը։

—

ՈՒՆԳԱՐԻԱՑԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Ֆրանսիական «Temps»-ի Բուդապեշտի թղթակիցը հաղորդում է, որ անկախների կուսակցութեան մէջ հէնց այժմից արդէն սաստիկ գժգոհութիւն կայ մինիստր-Պրիմերի պաշտօնի համար կոմս. Տիսսայի ընտրելու մտադրութեանդէմ։ Այդ ընտրութիւնը կայացած դէպքում, կուսակցութեան վաթսուն անդամները, իրենց գլուխ ունենալով Ապպոնիին, որոշել են անմիջապէս հեռանալ ազատամտական կուսակցութիւնից։

Գերմանակէն «Berlin. Tagepl.»-ը թերթի հաղորդածի համաձայն, ազատամտական կուսակցութեան չափաւոր ներկայացուցիչներից ոմանք ամեն ջանք գործ են գնում տիրող տագնապը անցնելու և ազատրիական ինքնակալի հետ հաշտուելու համար։ Նրանց ծրագիրն է—ազատամիտներին համաձայնել տալ զինուորական մի այնպիսի ծրագիր մշակելու, որ բնդունելի կարողանայ լինել կայսրի կողմից և հնարաւորութիւն տայ Լուկաչին կաբինէտ կազմելու, իսկ օպոզիցիային ստիպի վերջ տալու քաղաքականութեան ձգձգման։ Վիննայում հնթադրում են, թէ կարելի է այդ ծրագրները իրագործել և կարճ վրայ առհասարակ լաւատես հայացք ունեն, մինչդեռ Բուդապեշտում դրա բոլորովին հակառակն է։ Այդ քաղաքի դիւանագէտների կարծիքով, անսպառելի է, որ օպոզիցիան, առանց լուրջ զիջումներ լինելու տեղի տայ, և, բացի դրանից, հարց է, թէ, Լուկաչը յանձնառու կլինի կաբինետը կազմակերպելու թէ ոչ։

—

ՔԱՂԱՔ. ԼՈՒՐԵՐ

Ամերիկական Truth» թերթը հաղորդում է, թէ Նիւ-Յորկ նահանգի Դանուէմորէ քանտում ճգրագործներին ենթարկանութեամբ սպանելու փորձը կատարեալ յաջողութիւն են ունեցել։ Ենթարկանութեամբ այնտեղ պատժել են երեք կրթայրներ 22—28 տարեկան ընդամենը 15 րոպէի ընթացքում։ Մահը տեղի է ունեցել րոպէապէս, առանց ամենափոքր ջղաձգութիւնների։

—«N. Fr. Presse»-ը հաղորդում է, որ բելգիական Լէոպոլդ թագաւորը Վենա է գնալու բացառապէս Գոնցոյի թագաւորութեան վերաբերուած գործերը կարգադրելու համար։

—Hart. Zeit»-ին Կ. Պոլսից յայտնում են, որ Երզրդ-Ջեօչկի մօտ օրերս սուլթանի կեանքի դէմ դաւեձել նոր պատգրութիւն է բացուել, որի առիթով ձերբակալուած են 20 թիւրք զինուորականներ և աքսոր ուղարկուած ժամանակ ճանապարհին սպանուած։

— Մակեդոնիայի հիւպատոսների տուած տեղեկութիւնների համաձայն, ապստամբական խմբերի գործունէութիւնը թուլացել է. զինքերի յանձնում շարունակւում է և խմբերը ղգալի կերպով ցանցառացել են։

—Արտակարգ դատարանը Մոնաստիրում դատի ենթարկելով 650 բուլղար, նրանցից 250 հոգուն դատապարտել է աքսորի Փոքր-Ասիա։

ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(Ռուսաց հեռագրական գործակալութիւնից)

—

Հոկտեմբերի 8-ից

Կ. ՊՈԼԻՍ.—Երզրդ-Ջեօչկի և Նաչհիչի միջև տեղի ունեցող բանակցութիւնները դադարկին։

ՊԱՐԻԶ.—Փրանս-անգլիական համաձայնութիւնը միջնորդ դատարանի վերաբերմամբ հանդիսանում է միայն իբրև առաջին քայլ նախապատրաստում են դարձել չորս այդպիսի համաձայնութիւններ Իտալիայի, Հոլլանդիայի, Շուեդիայի և Նորվեգիայի հետ։ Փրանսիատալական դաշնագիրը կհրատարակուի Լուբէի Հռոմ ճանապարհորդելուց յետոյ, իսկ մնացածները կստորագրուին չուտով։

Կ ՊՈԼԻՍ.—Սուտ է այն լուրը, թէ անգլիական դեսպանը մի յայտագիր է յանձնել Դրանը, որով պահանջում է իրագործել Քեռլինի դաշնագրի որոշումները նմանապէս և այն լուրը, թէ այդ պահանջին աջակցում է իտալական կառավարութիւնը,

Արդէն մի քանի օր է, որ ոչ Դուռը, ոչ էլ դեսպանները տեղեկութիւններ չեն ստացել հրոսակախմբերի հետ եղած մեծ ընդհարումների մասին։

Հոկտեմբերի 9-ից

ՀՌՈՄ. — Մինիստրների այսօրուայ խորհրդում Ճանարդէլլին հաղորդել է, թէ ինքը թագաւորից խնդրել է՝ ազատ անել իրեն մինիստր-նախագահի պաշտօնից։ Իւր առողջութեան անյառաձգելի պահանջը, որ չբարւոքուեց անցած, համեմատաբար, առաւել հանգիստ ժամանակի ընթացքում պարտաւորեցրել է իրեն թագաւորից խնդրել, որ նա յարգի իւր հրաժարականը։

ՋՈՒԼՖԱ.—Սկսուած են հողային աշխատանքները Ջուլֆա-Երևանեան գծի երկայնութեամբ։

ՆԱԶԸԿՈՎՕ.—Երկրագործական դեպարտամենտը Ի. Ն. Եաղլկովին Սիմբիրսկի նահանգի Շիլովկա գիւղում թողլատրել է հիմնել գիւղատնտեսական վարպետների դասընթացներ։ Դասընթացները նպատակն է պատրաստել գործնական հմտութիւն ունեցող վարպետներ, որոնք կարող լինին վերանորոգել ընդհանրացած մեքենաներն ու երկրագործական գործիքները և ցոյց տալ գործնականի մէջ նրանց գործածելու կերպերը։ Ուսման ժամանակը երկու տարի է։

ՋԻՒՈՏԻ.—Լուրեր են պատում, թէ ձերմակ Նեղոսի անգլիական սահմանների վրայ տեղի ունեցած դէպքերի պատճառով Մենելիք նեգուսը հրաման է արել բնդհանուր սպառազինութեան ձեռնարկել։

ՀՌՈՄ.—Ճապոնական միսսիան ժընևում է թիւրքական ճեմարանից ճապոնական սպաների կանչուելու մասին տատածուած լուրը և յայտարարում է, թէ Ճապոնիայի ու Ռուսիայի միջև եղած տարաձայնութիւնները պէտք է կարգադրուին դիւանագիտական ճանապարհով։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԾԱՆՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՍՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Ռուսական օպերա
Անտեպարիզ Նորին Մեծութեան
ՍՈԼԻՍՏ Ն. Ն. ՏԻԳԱՆՈՎԻ
Ուրբաթ, հոկտեմբերի 9-ին,
կը ներկայացուի

Հուգեւոտներ

Օպերա 4 գործ. երաժ. Մայերբերի։ Մասնակցում են՝ ա. ա. Գալցինա, Կարատաիևա, Կարրի, Լեվինա. Սկռըպսկայա, Տրոյինիկովա. պ. պ. Դարսկի, Իլիչչենկո, Նելախով. Շմակով, Կլիզներ, Սանգուրսկի։ Ֆեոդորով, Դրինեով, Գաւրիլով։

Դիմ. ռեժիս. Ն. Ն. Բագալիւբով։

Կապելմայստեր՝ Ե. Դ. Էսպոզիտա.

Սկիզբն է երեկ. ժամը 8-ին

ԱԶԴ.—Վաղը, չարաթ, հոկտեմբերի 11-ին, 3 «Գալա» ներկայացումը, կներ կայացուի «Օպրիչնիկ». օպ. 4 գործ. և 5 պատ., երաժ. Չայկովսկու, մասնակցութեամբ Նորին Մեծութեան սոլիստ Ն. Ն. Ֆիգների։ Կիրակի, 12 հոկտեմբերի, Մասնակցութեամբ Նոր. Մեծ. սոլիստ Փիգների կատարյացուի 1) «Պայազները», օպ. 2 գործ. տառաջաբանով, երաժ. Լեոնկովալլոյի. և 2) «Փիդոկան հարսանիք» Կրակովի ինքնուրոյն բալետ հնդ. Մօրիսօյի. երաժ. Մտեֆանիի։ Պատրաստ. Ներկ. | տնգամ «Ֆրանչեսկա դա-Ռիմինի» օպ. 4 գործ. երաժ. է. Նազարանիկի։

(252) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՎԱՐԱՆ
Հոկտեմբերի 7-ից սկսած ամեն չարաթ երեքաբթի օրերը
կարուն
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐ
և
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՑԹՆԵՐ
մասնակցութեամբ սազանդարների և զինուորական երաժշտական խմբի։

(272) 3—2.

Հոյս տեսաւ Մ. ՀԱՄՇԵՆԱՆԻ
1904 թ.
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑԸ
Գիլիկիոյ նորօծեալ Կաթողիկոսի և հանգուցեալ Արբեպ. Մելքիսեդեկ Մաւրագեանի պատկերներով։
Հասցէն՝ Թիֆլիս, Մակար 2մչկեան
(269) 12—5

ՀՐԱՒԻՐ

Հոկտեմբերի 12-ին, Կիրակի առաւօտեան ժամը 11-ին Բեթղեհեմի Ս. Աստուածածինի եկեղեցում ժողով է լինելու, նոր երէցփոխան ընտրելու, ուստի սրանով մեծապատիւ պպ. ծխերն վերջին անդամ հրաւիրւում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեան մասնակցելու։

Գործակալ Ա. միսին Տփխիսի
Գրիգոր աւագ քահանայ Մանգա-
(279) կունի 2—1

ԲՆՏԵԼԻԳԵՆՏ ընտանիքում վարձու է տրւում մի չքեղ սենեակ, որը նայում է փողոցին, ունի առանձին մուտք, լաւ կահաւորուած է, կարելի է և առանց կահաւորանքի։ Տրւում է ճաշ։ Կունսուլսկի փողոց, ս. Եղիազարեանի № 30, հարցնել լաքէյ Խաչատուրին։

5—5

Բարձր պատկարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՑԼԴ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնամ է և իւրայի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհ. հալութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

— LA POUDR SEMON —

(Պուդր Սիմոն) La savon à la Cpeme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J Sl MON. 59 Laubourg St. Martin Paris. Մաս-մաս վաճառւում է վարսավիրների. պաբֆիւմբերների և դեղագործների մօտ։

(M 188.706) 24—1

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառւում են հետևեալ նոր հրատարակութիւնները
«Զէյթունի անցեալէն ու ներկայէն, դրից Զէյթունցի, մասն ա. 1 ր 50.
» » » » » » ր. 1 ր.
«Երազ կամ Օսկան Պետրովիչը Եղեմում, Ա. Սարգսեանի 20 կ.
«Խենթը», Վ. Փափազեանի 10 կ.
«Կեանքի ծովերի խորքում», Լունկևիչի 50 պատկերով 30 կ.
«Մաքերը Մակսիմ Գօրկիյ, թարգմ. Ցովհ. Ստեփաննանց 5 կ
«Բաշօ», Ահարոնեանի հայերենից թարգմ. ռուսերէն Գ. Մելիք-Կապազեան 20 կ
«Եւդինէ», Շիրվանզադէի, պրամա 2 գործ. 50 կ.
«Պատմական պատկերներ» Ե. Շահազիզի 60 կ.
«Պատկերազարդ այբբենարան», Ղ. Ագայեանի 13 կ.
«Ղզրատի պատիւը կամ նախախնամութեան մատը» Ալթունեանի,
«Արդարն ու մեղաւորը», Տօլստոյի 5 կ.
«Տրիլբի,» դրամա 4 արարուածով, թարգմանութիւն Լ. Մելիք-Ադամեանի 25 կ.
«Երեք մահ», Տօլստոյի 10 կ։
«Փանօթ պատկերներ», Յ. Դուրբախեանի 75 կ.
«Շիլէր», 2 հատոր, Թառայեանի, շքեղ կազմով 4 ր.
«Աղջիկը», բժ. Արծրունու 60 կ.
«Ոսկի աքաղաղ», Բաֆֆի 1 ր,
«Մրրիկի ուրբը, Ահարոնեանի 1 ր.
Դումարով պնդողներին զեղչ կլինի։

Դիմել,—Тифлисъ Книжный магазинъ ГУТТЕНБЕРГЪ Г. И.

(278) 2—2 Галустянцу.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան երկաթուղիների վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1903 թուի հոկտեմբերի 15-ից մարդատար գնացքների ժամակարգութիւնը փոխւում է հետևեալ կերպով.

Գնացքների ժամանման և մեկնումի ժամերը նշանակուած են ըստ Պետերբուրգի ժամանակի, որը յետ է մնում Թիֆլիսի ժամանակից 58 րոպէով։

Բաքուից մինչև Բաթում

Կայարանները	Արագ գովկասեան—Մոսկ.—Թիֆլ. № 19		Գոստային № 3		Մարդատար № 5		Ապր.-մարդ. № 17	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Բագու . . .	գիշ.	3.50	առ.	10.30	ցեր.	12.50	գիշ.	3.10
Բալաջարի .	6.13	6.14	10.58	11.13	1.17	1.37	3.37	4.07
Հաջի-Քաբուլ	8.40	8.48	2.13	2.30	4.29	4.49	7.12	7.37
Ջիւդամիր .	10.14	10.19	4.19	4.29	6.35	6.47	9.41	9.58
Նուխա . . .	12.12	12.22	7.04	7.20	9.31	9.46	1.06	1.31
Գանձակ . .	2.07	2.15	9.33	9.50	11.58	12.08	3.46	4.22
Ադստափա .	5.32	5.40	12.50	1.18	3.03	3.13	1.38	8.03
Թիֆլիս . .	7.04	երեկ.	4.40	5.30	6.15	7.10	11.24	գիշ.
Դարի			7.56	8.04	9.36	9.44		
Միխայլովս .			9.19	9 39	10.57	11.17		
Շաւոպանի .			12.14	12 22	1.49	1.54		
Ծիխոճ . . .			1.37	1.53	3.04	3.14		
Սամահեդի .			2.40	2.55	4.01	4.21		
Բաթում . .			6.11	առ.	7.25	երեկ.		

Բաթումից մինչև Բաքու

Կայարանները	Արագ գովկասեան—Մոսկ.—Թիֆլ. № 20		Գոստային № 4		Մարդատար № 6		Ապր.-մարդ. № 18.	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Բաթում . .			գիշ.	11.10	առ.	8.34		
Սամահեդի .			2.29	2.24	11.41	12.01		
Ծիխոճ . . .			3.35	3.47	12.52	1.02		
Շաւոպանի .			4.53	4.59	2.11	2.18		
Միխայլովս .			7.44	7.59	5.12	5.27		
Դարի . . .			9.04	9.12	6.32	6.42		
Թիֆլիս . .	ցեր.	4.30	11.25	12.10	9.00	9.30	առ.	6 36
Ադստափա .	6.46	6.54	3.00	3.20	12.16	12.26	9.30	9.50
Գանձակ . .	9.13	9.21	6.26	6.48	3.36	3.52	1.00	1.24
Նուխա . . .	10.41	10.51	8.37	8.52	5.40	5.50	3.32	3.8
Ջիւդամիր .	12.45	12.50	11.21	11.33	8.24	8.34	6.25	6.36
Հաջի-Քաբուլ	2.18	2.26	1.16	1 31	10.25	10.45	8.22	8.41
Բալաջարի .	4.53	4.54	5.18	5.47	1.48	2.13	11.50	12.20
Բագու . . .	5.15	գիշ.	6.10	առ.	2.35	ցեր.	12.42	գիշ.

Թիֆլիսից մինչև Երևան և յետ

Գոստային 74/75		Ապր.-մարդ. 90/91		Կայարանները	Գոստային 76/77		Ապր.-մարդ. 92/93	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
երեկ.	10.15	ցեր.	12.30	Թիֆլիս .	5.55	գիշ.	4.00	ցեր.
3.08	3.18	5.15	5.30	Սանահին	12.55	1.18	11.07	11.30
5.23	5.38	7.32	7.52	Գարաք.	11.15	11.29	9.20	9.36
8.54	9.14	11.08	11.50	Ալէքսանդ.	7.56	8.16	5.02	6.02
3.02	ցեր.	7.26	առ.	Երեւան .	ցեր.	12.52	երեկ.	7.34

Ալէքսանդրապոլից մինչև Կարս և յետ

Գոստային 95		Ապր.-մարդ. 97		Կայարանները	Գոստային 96		Ապր.-մարդ. 94	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
առ.	9.30	երեկ.	11.40	Ալէքսանդ.	7.40	երեկ.	5.20	գիշ.
երեկ.	3.10	գիշ.		Կարս . .	երեկ.	4. 37	գիշ.	2.07
ցեր.	առ.							

Բորժոմից մինչև Բակուրիանի և յետ

Մարդատար 93		Մարդատար 95		Կայարանները	Մարդատար գնացքներ 94		Մարդատար գնացքներ 96	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
առ.	6.00	առ.	8.20	Բորժոմ	2.31	ցեր.	5.58	ցեր.
9.58	առ.	1218	ցեր.	Բակուրիանի	առ.	10.34	ցեր.	2.00

Թիֆլիս-Միխայլովս-Բորժոմ և յետ

Մարդատար գնացքներ 90		92		7/8		Կայարանները	Մարդատար գն. 8/7		89		91	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
				ցեր.	2.00	Թիֆլիս	6.40	առ.				
				4.24	4.39	Դարի .	4.20	4.29				
առ.	8.10	երեկ.	9.50	6.00	6.10	Միխայլովս .	2.30	3.14	5.00	ցեր.	11.01	առ.
9.20	առ.	11.00	եր	7.20	եր.	Բորժոմ	գիշ.	1.20	ցեր.	3.50	առ.	9.53

Սամտրեդիից մինչև Փոթի և յետ

Կայարանները	Մարդատար գնացք 111		115		Ապր.-մարդ. 113	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Սամտրեդի	գիշ.	3.10	ցեր.	4.30	ցեր.	12.20
Փոթի . . .	5.29	գիշ.	6.36	երեկ.	2.24	ցեր.

Փոթիից մինչև Քութայիս և յետ

Կայարանները	Մարդ. 112		Ապր.-մարդ. 114		Մարդատար գն. 116		118	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Փոթի	առ.	6. 00	առ.	9.24	ցեր.	1.32	գիշ.	11.56
Սամտրեդի	8.00	8.15	11-30	առ.	3.40	ցեր.	2.10	գիշ.
Ծիխոճ	9.06	9.10						
Քութայիս	9.30	առ.						

Ռիոնից մինչև Քութայիս և յետ

Կայարանները	Մարդատար գնացքներ 12	102	104	106	110	Կայարանները	Մարդատար գնացքներ 11	101	103	107
Ռիոն մեկն.	7.50	2.10	4.45	1.10	7.20	Քութայիս մեկն.	3.10	1.00	3.00	2.20
Քութայիս ժամանն	8.10	2.30	5.05	1.30	7,40	Ռիոն ժամանն.	3,30	1.20	3.20	2.40
	առ.	գիշ.	գիշ.	ցեր.	երեկ.		ցեր.	գիշ.	գիշ.	ցեր.

Միխայլովոյից մինչև Սուրամ

Կայարանները	Ապրանքակիր-մարդատար 79	81	83	85	87	Կայարանները	Ապրանքակիր-մարդատար 80	82	84	86
Միխայլովս մեկն.	2.20	8.10	11.28	6.18	9.50	Սուրամ մեկն. . .	2.48	7.08	10.30	4.48
Սուրամ ժամանն .	2.32	8.22	11.40	6.30	10.02	Միխայլովս ժամանն.	3.00	7.20	10.42	5.00
	գիշ.	առ.	առ.	երեկ.	երեկ.		գիշ.	առ.	առ.	ցեր.

Սուրամից մինչև Միխայլովս

Ջորսպան-Դարկվեթի և յետ

Մարդատար 98		100		Կայարանները	Մարդատար 97		99	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
առ.	6.00	ցեր.	5.00	Շաւոպան	1.30	ցեր.	11.55	եր.
8.27	8.40	7.25	7.40	Ձիսթաւէի	11.03	11.23	9.28	9.48
9.00	առ.	8.00	եր.	Դարկվեթի	առ.	10.45	եր.	9.10

Բաթումից մինչև Նոթանեբի և յետ

Մարդատար 14		16		Կայարանները	Մարդատար 13		
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում
գիշ.	5.54	ցեր.	2.00	Բաթում	8.06	առ.	5.36
6,33	6.35	2.32	2.34	Ջակվա	7.33	7.34	5·01
6.52	առ.	2,51	2.55	Կութայիսի	առ.	7.14	4.37
		3.18	ցեր.	Նոթանեբի			ցեր.

Բաթումից մինչև Ջարսպանի և յետ

Մարդատար 10		Կայարանները	Մարդատար 9	
Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում
գիշ.	12.07	Բաթում . . .	11.22	երեկ.
3.25	3.39	Սամտրեդի .	7.54	8.09
4.30	4.40	Ծիխոճ . . .	7.00	7.07
5,48	գիշ.	Շաւոպան .	ցեր.	5.50

Ռիոնից մինչև Տզվիրուլի և յետ

Ապր.-Մարդ. 108		Կայարանները	Ապր.-մարդ. 105	
Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում
ցեր.	3.40	Ռիոն	12.40	ցեր.
4.00	5.30	Քութայիս .	10.00	12.20
8.55	երեկ.	Տզվիրուլի .	առ.	6.30

Բաթումից մինչև Ջարսպանի և յետ

Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլիս		Գոստային		Մարդատար				Ապր. մարդ.		Կայարանները	Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլ.		Գոստային		Մարդատար				Ապր. մ
№ 19 bis		№ 3 bis		№ 5 bis		№ 9 bis		№ 11 bis			№ 20 bis		№ 4 bis		№ 6 bis		№ 10 bis		№ 12
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում
առ.	6.00	առ.	7.50	եր.	11.42	ցեր.	2.20	ցեր.	3.20	Բագու	5.08	գիշ.	9.20	եր.	3.55	գիշ.	1. 10	ցեր.	11.40
6.28	առ.	8.20	առ.	12.12	գիշ.	2.50	ցեր.	3.55	ցեր.	Բալաջարի	գիշ.	4.45	եր.	8.58	գիշ.	3.33	ցեր.	12.43	առ.

Ջորսպան-Վլադիկավկազի երկ. գնացքները

Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլիս		Գոստային		Մարդատար		Ապր. մարդ.		Կայարանները	Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլ.		Գոստային		Մարդատար				Ապր. մ
№ 19 bis		№ 3 bis		№ 5 bis		№ 9 bis		№ 11 bis			№ 20 bis		№ 4 bis		№ 6 bis		№ 10 bis	
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
առ.	6.00	առ.	8.20	Բորժոմ	2.31	ցեր.	5.58	ցեր.										
9.58	առ.	1218	ցեր.	Բակուրիանի	առ.	10.34	ցեր.	2.00							ցեր.	2.00		
										Թիֆլիս	6.40	առ.						
										Դարի .	4.20	4.29			4.24	4.39		
				առ.	8.10	երեկ.	9.50	6.00	6.10	Միխայլովս .	2.30	3.14	5.00	ցեր.	11.01	առ.		
				9.20	առ.	11.00	եր	7.20	եր.	Բորժոմ	գիշ.	1.20	ցեր.	3.50	առ.	9.53		

Ջորսպան-Վլադիկավկազի երկ. գնացքները

Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլ.		Գոստային		Մարդատար				Ապր. մարդ.		Կայարանները	Արագ Կովկասեան. Մոսկ.-Թիֆլ.		Գոստային		Մարդատար				Ապր. մ
№ 19 bis		№ 3 bis		№ 5 bis		№ 9 bis		№ 11 bis			№ 20 bis		№ 4 bis		№ 6 bis		№ 10 bis		№ 12
Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում		Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում
առ.	6.00	առ.	8.20	Բորժոմ	2.31	ցեր.	5.58	ցեր.											
9.58	առ.	1218	ցեր.	Բակուրիանի	առ.	10.34	ցեր.	2.00							ցեր.	2.00			
										Թիֆլիս	6.40	առ.							
										Դարի .	4.20	4.29			4.24	4.39			
				առ.	8.10	երեկ.	9.50	6.00	6.10	Միխայլովս .	2.30	3.14	5.00	ցեր.	11.01	առ.			
				9.20	առ.	11.00	եր	7.20	եր.	Բորժոմ	գիշ.	1.20	ցեր.	3.50	առ.	9.53			

Սամտրեդիից մինչև Փոթի և յետ

Կայարանները	Մարդատար գնացք 111		115		Ապր.-մարդ. 113	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Սամտրեդի	գիշ.	3.10	ցեր.	4.30	ցեր.	12.20
Փոթի . . .	5.29	գիշ.	6.36	երեկ.	2.24	ցեր.

Փոթիից մինչև Քութայիս և յետ

Կայարանները	Մարդ. 112		Ապր.-մարդ. 114		Մարդատար գն. 116		118	
	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում	Ժամանում	Մեկնում
Փոթի	առ.	6. 00	առ.	9.24	ցեր.	1.32	գիշ.	11.56
Սամտրեդի	8.00	8.15	11-30	առ.	3.40	ցեր.	2.10	գիշ.
Ծիխոճ	9.06	9.10						
Քութայիս	9.30	առ.						

Յանձնարարութիւն։

1) Կովկասեան արագ գնացքները №№ 19 և 20 Մոսկուայի Թիֆլիսի միջև երթևեկում են, մտնելով Բագու կայարան, շաբաթի անդամ. № 19 գնացքը ժամանում է Թիֆլիս ուրբաթ, իսկ № 20 մեկնում է Թիֆլիսից երեքշաբթի և անցնում է Բագու չորեքշաբթի օրերը։

2) Ապրանքակիր մարդատար գնացքները №№ 17 և 18 Թիֆլիսի և Բագուի միջև կերթևեկեն 1904 թուի յունուարի 1-ից։

3) Ապրանքակիր մարդատար գնացքները №№ 94 և 97 Ալեքսանդրապոլի և Կարսի միջև կերթևեկեն միայն այն չափով, որքան որ իսկապէս հարկաւոր կլինի։

4) Հոկտեմբերի 14-ից Կարսի գծի պոստային № 74/75 գնացքը կուղարկուի Թիֆլիսից ըստ ձմեռային ժամակարգութեան, այսինքն փոխանակ երեկոյեան 11 ժ. 30 ր. կուղարկուի երեկոյեան 10 ժ. 30 ր. ըստ Պետերբուրգի ժամանակի։

Дозв. Цензурою 9-го Октября 1903г. Վերէիչ և Պատասխանատու

Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852